

գրուր շեղեացն, եւ այս ի խնորոյ սբ. Լուսաւորչիւն մերոյ՝ ի պատիւ ազգիս Հայոց» (Սևն, էջ 605): Իսկ Յովհաննէս եպս. Երուսաղէմացի իր Պատմութեան մէջ (էջ 181-2) Ս. Լուսաւորչի մասին հետեւեալը կը գրէ. «Լուսաւորիչն մեր սբն. Գրիգոր մինչ ձգեւր ի Սեպուհ շեամն՝ կաւեցաւ զայ յերկրպագութիւն անկեանսուրբ գերեզմանին Քրիստոսի, բայց ոչ հետիոսս, այլ երեւաւրջ եւ ի վերայ ծրելացն: Զոր երեւեալ Սերոյբիկին ոչ բոյլ ետ նենս հրամանաւն Աստուծոյ այնպիսի սաժանելի կերպիւրք զայ, այլ ոսնաբայ ընթացեալսք հրաշարեւր զնս զնայ: Եւ այսպիս երանելի հայրս մեր եկն ի սբ. քաղաքս Երուսաղէմ, եւ անարժան համարեւր զինքն մտանել ի սբ. գերեզմանն ածընկալ: Վասն որոյ սաի թե ի Սաչգիւղսն ձգեալ միևնեւ ցեօրն առ, վասն այնորիկ կոչեցին զնկեղեցին յանուն նորիս սբ. Լուսաւորիչ: Եւ սպա յաւուր մեծի շաբաթի ճարագարացին ի մտանելն ի սբ. գերեզմանն, ի պատիւ արժանաւորութեան երանելոյն վառեցան անկեանցն կանքեղքն որք կրպիկն ի սբ. գերեզմանն: Եւ սասց. Լոյս գուարք...»: Այս աւանդութիւններէն կը բղխի անտարակոյտ Ս. Գերեզմանի արտաքին զբան Հայոց պատկերին քով Ս. Լուսաւորիչ անուամբ կախուած կանթեղին աւանդութիւնն ալ:

## 2. Ս. Լուսաւորչի եկեղեցին .

Ս. Յարութեան տաճարին մէջ Ս. Դուռնկիանոսի սեղանէն երկու մէթր հեռաւորութեամբ կը գտնուի Հանդերձից բաժանման սեղանը՝ որ հայոց սեպհական է. նոյն ուղղութեամբ քիչ մը յառաջ երթալով զէպ ի արեւմուտք անփեղկ դուռ մը կը տեսնուի, ուրկէ 29 աստիճանաւ կ'իջնուի Ս. Լուսաւորիչ եկեղեցին: Հաննէ (էջ 191-93) հետեւեալ կերպով կը նկարագրէ նոյն եկեղեցին «... ունելով չորս մարմարեայ սիւնս ազնիւս, որոց վերայ կառուցեալ կարողիկի մի փառաւոր. վեց պայծառ լուսանօք, եւ յարեւերս առաջ խորանն հրաշարի սեղանիս եւ դասիս. եւ յաջակողմն եւս զոյ սեղան մի ազնիւ: Այդ այս սուրբ եկեղեցիս է շինեալ 'ի Հեղինէէ յանուն կենսունակ արքոյ Սաչիս: Զմեծ առաջ սեղանն եւ զաջակողմեան միս սեղանն՝ նորեւեց յանուն բարի առաքակիկն Դեմասայ: Իսկ յորժամ Լուսաւորիչն մեր եկեալ սաս ձգեցաւ է առ. որ ունեւր ընդ ինքն զնսն ինչ 'ի Նխարաց արքոյ Կարապետին Քրիստոսի որ առ ինքն